# ԹԵՎ ԲԵՅՐՈՒԹԻՑ ՇՈՒՇԻՆ ՉԻ ԵՐԵՎՈՒՄ...



Շուշիի «Վարանդա» երգչախմբի ելույթի պահին (աջից՝ ղեկավար Զաքար Քեշիշյան)

Չնայած բեյրութցի Զաքար Քեշիշյանը պնդում է, որ երեւում է, այն էլ այնքա՜ն պարզ ու տեսանելի: Իսկ պնդում է, որովհետեւ դեռեւս Բեյրութում Միջերկրականի այդ գեղատեսիլ ափին, նա հոգու աչքերով ուրվագծում էր Արցախ լեռնաշխարհի ամեն մի քար ու թուփը, ամեն մի անկյունը: Եվ գուցե դա էր պատճառը, որ երբ անցյալ տարվա դեկտեմբերին ոտք դրեց Շուշի՝ բոլորովին էլ չզարմացավ, ամեն ինչ այնպես մոտ ու հարազատ էր իրեն, այնպես ծանոթ ու մտերիմ:

—Այսօր ինձ հարազատ են դարձել փոքրիկ շուշեցիները,— ասում է Զաքարը,— առանց նրանց չեմ պատկերացնում իմ կյանքը, առօրյան: Հենց առաջին օրը, երբ «Արամ Մանուկյան» նորաբաց վարժարանում ստեղծեց «Վարանդա» երգչախումբը, նրանց հետ իմ ծանոթությունը փոխվեց ազնիվ ու շարունակվող բարեկամության: Այսօր երգչախմբում ընդգրկված են 3-9-րդ դասարանների շուրջ 40 երեխաներ: Բոլորն էլ սիրում են հայ երգն ու երգարվեստը: Այդ սերն է պատճառը, որ, չնայած կենցաղային դժվարին պայմաններին, այնուամենայնիվ, նրանք հաճախում են երգչախմբի պարապմունքներին, խորանում երգարվեստի զարմանահրաշ գաղտնիքների մեջ:

Զաքար Քեշիշյանը 88-ից ղեկավարում էր Համազգայինի Անջարի «Պարույր Սեւակ» մասնաճյուղի «Կարավիկ» մանկապատանեկան երգչախումբը, իսկ 92-ին հիմնադրեց լիբանանահայ ազգային վարժարանների «Ծիածան» երգչախումբը, որն իր անդրանիկ համերգում ընդգրկել էր ճանաչված երգահան Արեգ Լուսինյանի «Երաժշտական աշխարհն» ստեղծագործությունը:

«Վարանդա» երգչախմբի ծրագիրը հետաքրքիր է ու բովանդակալից, այն ընդգրկում է ինչպես հայրենի, այնպես էլ սփյուռքահայ ճանաչված երգահանների ու գրողների ստեղծագործությունները:

—Նպատակս մեկն է՝ իմ ամբողջ երաժշտական պատրաստությունը նպաստ դնել վերակենդանացնելու Շուշիի ոսկեժառանգ մշակութային հարուստ անցյալը,— ասում է փորձառու խմբավարը,— վստահ եմ, որ այս երեխաները պիտի կազմեն հիմքը ապագայի բարձրորակ երգչախմբի: Եվ այս ամենից զատ, ի վերջո հարկավոր է աշխարհին ապացուցել, որ մշակույթի զենքը զորեղ է եւ միայն փամփուշտ արձակող զենքով չէ, որ մենք նվաճել ենք Շուշին:

«Վարանդան» (ղեկավար՝ Զաքար Քեշիշյան, դաշնակահար՝ Մարինե Բարխուդարյան, մենակատար՝ Ռուզաննա Աղաջանյան) դարձյալ իր տարերքի մեջ է այսօր: Նրա ծրագիրը թարմացվում է, ծնվում են նոր երգեր: Երգչախումբը պատրաստվում է նոր համերգաշարով անցնել իր նոր երթուղին: Իսկ երթուղու կանգառներն են լինելու ինչպես Երեւանն ու Էջմիածինը, այնպես էլ Գյումրին, Վանաձորն ու Սպիտակը, ուր աղետյալ իրենց հասակակիցների առջեւ փոքրիկ շուշեցիները հանդես կգան «Զոն Շուշիին», «Ժառանգներն ենք Արցախի», «Եռաբլուր», «Դեպի արեւ» եւ այլ հայրենասիրական երգերով:

Գ. ՍԱՐՈՅԱՆ